

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի «Գլաճոր» համալսարանի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԶՈՒՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

Այս հոդվածում հետազոտվում է մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավաչափության հիմքերը ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պրակտիկայի:

Հիմնարաներ- Եվրոպական դատարան, իրավունքներ և ազատություններ, իրավաչափության հիմքեր, նախադեպային իրավունք, պետական անվտանգություն, քաղաքացիական հասարակություն, դեմոկրատական հասարակություն:

Մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու իրավաչափության հիմքերը մշակվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում և նախադեպային իրավունքում: Այդ հիմքերն են. եթե այդ սահմանափակումները անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Սահմանափակման նշված հիմքերն անհրաժեշտություն են, երբ իրավակարգին սպառնացող վտանգները հնարավոր չէ չեզոքացնել այլ կերպ, քան այդ իրավունքների ու ազատությունների սահմանափակմամբ:

Բնական ազատությունը համարվում է ի սկզբանե բացարձակ երևույթ, որով մարդն օժտված է ծննդյան պահից, և այն ավարտվում է մահվամբ: Միևնույն ժամանակ այն ձեռք է բերում սահմանափակ բնույթ այն պատճառով, որ հասարակության մեջ անհատն ապրում է իր նման էակների միջավայրում, որոնց շահերն ու պահանջմունքները, լինելով միանգամայն տարբեր, երբեմն նաև մտնում են խոր հակասությունների մեջ: Նման դեպքերում եթե յուրաքանչյուրը փորձի իրացնել միայն իր բացարձակ ազատությունը, ապա անհնարին կլինի հասնել համացոցիալական նպատակների իրագործմանը, առանց որի հասարակությունը, բնականաբար նաև մարդը, գոյատևել չեն կարող: Հետևաբար մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը, ինչպես և իրականացումը, նույնպես բնական վիճակ է:

Օրինակ, խոսքի, արտահայտվելու, սեփական կարծիք ունենալու, տեղեկատվություն և գաղափարներ ստանալու ու տարածելու ազատությունները կարող են ունենալ սահմանափակումներ: «Այս ազատությունների իրականացումը, քանի որ դրանք կապված են պարտավորությունների, պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել... ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով...», -սահմանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայում²:

Կոնվենցիան «հուշում» է, որ արտահայտվելու ազատության իրականացումը նախատեսում է նաև «պարտավորություններ և պատասխանատվություն», ինչը նշանակում է, որ արտահայտվելու ազատության սահմանափակումը գնահատելիս հնարավոր է տարբերակված մոտեցում ցուցաբերել իրենց արտահայտվելու ազատությունն իրականացնող անձանց տարբեր խմբերի միջև (այդ թվում՝ զինված ուժերի ծառայողների, լրագրողների, քաղաքական գործիչների, արվեստագետների և այլն):

Եվրոպական դատարանն իր վճիռներում չի սահմանել «պարտավորությունների և պատասխանատվության» վերացական շրջանակ, այլ պարզապես նշել է, որ այս արտահայտության բովանդակությունը կախված է հեղինակի կարգավիճակից և այն տեխնիկական միջոցներից, որոնք նա օգտագործել է: Մասնավորապես Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում նշած է. «Պետք է որոշակի հարաբերություն լինի տվյալ անձի հատուկ կարգավիճակի և այդ կարծիքն արտահայտելու համար ընտրված միջոցի միջև» (սա բացատրվում է այսպես. քանի որ, ի տարբերություն տպագիր մա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մուլի, լրատվության տեսալսողական միջոցներն ավելի անմիջական են և ունեն ավելի հզոր ազդեցություն, «պարտավորություններն ու պատասխանատվությունը» համապատասխանորեն ավելի մեծ են):

Պրագերը և Օբերշլինքն ընդդեմ Ավստրիայի գործով վճռում Գատարանը մասնավորապես նշում է. «Պրագերը չէր գործել նաև լրագրողական վարքագծի կանոններին համապատասխան: Նրա կողմից կատարված ուսումնասիրությունները բավարար հիմք չէին նման հայտարարությունների համար: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ դիմողը ինքը երբևիցե չի հաճախել դատական միստերին: Ավելին, նա երբևէ այդ դատավորներին հնարավորություն չի տվել հանդես գալու իր դեմ ներկայացվող մեղադրանքների կապակցությամբ»³:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա մամուլի կողմից հրապարակային քննադատության պաշտպանության պայմանները շարադրված են Եվրոպական նախարարական 4-րդ կոնֆերանսի զանգվածային լրատվության ոլորտում՝ քաղաքականության մասին N2 բանաձևում: Ըստ այդ բանաձևի՝ լրագրողները, մասնավորապես, պետք է՝

- հարգեն փաստերի և իրադարձությունների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ ստանալու՝ հասարակության իրավունքը,
- տեղեկություններ հավաքեն արդար միջոցներով,
- ներկայացնեն արդարացի տեղեկատվություն, մեկնաբանություններ և քննադատություն,
- խուսափեն մասնավոր կյանքին չարդարացված միջամտությունից, զրպարտությունից և անհիմն մեղադրանքներից:

Այժմ անդրադառնանք արտահայտվելու ազատության իրավունքին պետության միջամտության դրսևորման ձևերին: Այդ միջամտությունը կարող է արտահայտվել հետևյալ ձևով՝

- քրեական պատասխանատվության կիրառում (տուգանքի նշանակում կամ ազատազրկում),
- քաղաքացիական պատասխանատվության կիրառում (վնասների հատուցում),
- հրատարակման արգելում,
- լրագրողական աղբյուրների բացահայտման հարկադրում,
- հրատարակված տպաքանակի բռնագրավում,
- հեռուստաընկերություններին լիցենզիա տրամադրելու մերժում,
- լրագրողական գործունեությամբ զբաղվելու արգելում:

Կոնվենցիայի մասնակից բազմաթիվ պետությունների օրենսդրություններ նախատեսում են քրեական պատասխանատվություն զրպարտության կամ վիրավորանքի համար, ինչը, ըստ էության, հե-

տապնդում է կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված իրավաչափ նպատակ՝ «այլոց հեղիանկության կամ իրավունքների պաշտպանությունը»: Չնայած այն բանին, որ զրպարտության կամ վիրավորանքի համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելը հետապնդում է Կոնվենցիայով նախատեսված իրավաչափ նպատակ, որպես կանոն, Եվրոպական դատարանը գտնում է, որ արտահայտվելու ազատությունը սահմանափակելու նման միջոցը համաչափ չէ հետապնդվող նպատակին և, հետևաբար, ոչ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Ըստ էության, Եվրոպական դատարանի նախադեպը հանդես է գալիս պետության կողմից խոսքի ազատությանը միջամտելու նման ձևի դեմ: Չրպարտության և վիրավորանքի համար լրագրողներին քրեական պատասխանատվության ենթարկելը Եվրոպական դատարանի կողմից գնահատվում է իբրև պետության կողմից խոսքի ազատությանը միջամտելու ամենավտանգավոր ձևը:

Համաձայն Եվրոպական կոնվենցիայի՝ արտահայտվելու ազատության սահմանափակումը պետության կողմից կարող է իրականացվել միայն 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմաններով:

Օբգերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում Եվրոպական դատարանը նշում է. «Արտահայտվելու ազատությունը, ինչպես ամրագրված է 10-րդ հոդվածում, ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանության արժանանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի»⁴:

Բոլոր այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանի առջև խնդիր է դրվում պարզելու, թե արդյո՞ք արտահայտվելու ազատության իրավունքին պատասխանող պետության կողմից այս կամ այն միջամտությունը հանդիսանում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում, Գատարանը վերլուծում է այս կերպ՝

- տվյալ միջամտությունը եղել է արդյոք «օրենքով նախատեսված»,
- միջամտությունը հետապնդել է արդյոք որևէ նպատակ կամ նպատակներ, որոնք 10-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, հանդիսանում են իրավաչափ,
- եղե՞լ է արդյոք վիճարկվող միջամտությունը «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» նշված նպատակին կամ նպատակներին հասնելու համար⁵: Գնահատելու համար, թե արտահայտվելու ազատության իրավունքին առնչվող պետության կողմից միջամտությունը Կոնվենցիայով

www.journal.lawinstitute.am

թույլատրելի սահմաններում է, Եվրոպական դատարանը առաջնահերթ կերպով պարզում է, թե տվյալ միջամտությունն արդյոք նախատեսված է պատասխանող պետության օրենքով:

Հարկ է ընդգծել, որ արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակման՝ «օրենքով նախատեսված» լինելու պահանջը, նախ և առաջ, ենթադրում է երկրի օրենսդիր մարմնի կողմից ընդունված և հրապարակված օրենքի առկայություն:

Բայց միշտ չէ, որ պատասխանող պետության ներպետական իրավունքում վիճարկվող սահմանափակման համար հիմք հանդիսացած օրենքի առկայությունը Դատարանն ընդունում է իբրև «օրենքով նախատեսված» լինելու պահանջի բավարարում: Համաձայն Դատարանի «սահմանած» նախադեպային իրավունքի՝ «օրենքով նախատեսված» արտահայտությունը պահանջում է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքին պետության միջամտությունը հենվի ներպետական օրենսդրության վրա, և խնդրի առարկա հանդիսացող օրենքն իր որակով լինի մատչելի շահագրգիռ անձի համար և կանխատեսելի⁶: Հարկ է նշել, որ արտահայտվելու ազատության սահմանափակումը հետապնդում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով հետապնդվող որևէ նպատակ: Ըստ էության, 10-րդ հոդվածի 2-րդ կետը սպառնիչ կերպով սահմանում է այն արժեքները, որոնց պաշտպանության նպատակը թույլ է տալիս արտահայտվելու ազատության սահմանափակումների կիրառում: Այդ արժեքները հետևյալներն են՝

1. պետական անվտանգությունը,
2. տարածքային ամբողջականությունը կամ հասարակության անվտանգությունը,
3. անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը,
4. առողջությունը կամ բարոյականությունը,
5. այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները,
6. խորհրդատվական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտման կանխումը,
7. արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը:

Թվարկված արժեքների պաշտպանությունից զատ որևէ այլ նպատակով կիրառված արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը համարվում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Այդ արժեքների պաշտպանության նպատակներն ընդունված է որակել «իրավաչափ նպատակներ»:

Կոնվենցիայի քննարկվող հոդվածում վերոհիշյալ իրավաչափ նպատակներից շատերն ընդհանուր ու նույնական են այն իրավաչափ նպատակների հետ, որոնք կարող են հիմք հանդիսանալ անձնա-

կան և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի (8-րդ հոդված), մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի (9-րդ հոդված), հավաքների և միավորման ազատության իրավունքի (11-րդ հոդված) սահմանափակման համար:

Ըստ էության ընդհանուր են պետական անվտանգության պաշտպանության, անկարգության կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության և այլոց իրավունքների պաշտպանության նպատակները:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով պայմանավորված խոսքի ազատության առանձնահատկություններով և բնույթով սահմանված են նաև առանձին իրավաչափ նպատակներ: Վերջիններս հատուկ են միայն խոսքի ազատության սահմանափակումներին: Նշված իրավաչափ նպատակների թվում են՝

- տարածքային ամբողջականությունը կամ հասարակության անվտանգությունը,
- այլոց հեղինակության պաշտպանությունը,
- խորհրդատվական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելը,
- արդարադատության հեղինակությունը և անաչառությունը պահպանելը:

Կարևոր է ընդգծել, որ միշտ չէ, որ Եվրոպական դատարանն ընդունում է պատասխանող կառավարությունների արտահայտվելու ազատության սահմանափակումը հիմնավորող փաստարկները (ի դեպ, Եվրոպական այդ կառույցի պրակտիկայում հնարավոր չէ ցույց տալ որևէ գործ, որում արտահայտվելու ազատության սահմանափակումը վերը թվարկված որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդել):

Չի կարելի շրջանցել նաև եվրոպական այս կարևոր կառույցի մեկ այլ փաստարկ. դատարանը, իր ուսանելի պրակտիկայից ելնելով, գտնում է, որ հենց իր կողմից Կոնվենցիայի մասնակից պետություններին սահմանափակման անհրաժեշտությունը և՛ որակելու, և՛ գնահատելու խնդրում տրամադրվող հայեցողության շրջանակները նույնը չեն: Այն դեպքերում, երբ վիճարկվող սահմանափակումն ուղղված է «պետական անվտանգության» պաշտպանության կարևոր նպատակին, պետությունների հայեցողության շրջանակը ավելի լայն է, քան մյուս դեպքերում: Դա բացատրվում է սրանով, որ ներպետական իշխանությունները (ի տարբերություն միջազգային դատավորների) ավելի բարենպաստ դիրքում են գտնվում (նկատի է առնվում սահմանափակման անհրաժեշտությունը գնահատելու գործընթացում):

Ամբողջացնելով տարբեր գործերի մասնավոր հանգամանքների հետ կապված մի շարք պայմանների բազմազանությունը՝ Եվրոպական դատարանը գա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

լիս է այն եզրահանգմանը, որ «պետական անվտանգության պաշտպանության» նկատառումներով արտահայտվելու ազատության սահմանափակումները վիճարկելու վերաբերյալ գործերը դասվում են այն գործերի շարքին, որոնց պարագայում դատարանն առավել հաճախ է հակվում ճանաչելու արտահայտվելու ազատությունը սահմանափակելու հնարավորությունը:

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը գտնում է, որ «պետական անվտանգության» պաշտպանության նպատակով կիրառված դիմողի՝ տեղեկություններ ստանալու ազատության սահմանափակումն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում զինված ուժերի արդյունավետությունն ապահովելու համար: Եվրոպական դատարանի նույն այդ գործով վճռում կարդում ենք. «Ոչ մի կասկած չի կարող լինել այն կապակցությամբ, որ պայմանավորվող պետությունները պետական անվտանգության պաշտպանության նպատակով կարիք ունեն համապատասխան օրենքների, որոնք իրավասու ներպետական մարմիններին վերապահում են՝

1. հասարակությանը ոչ մատչելի տեղեկություններ հավաքելու և պահելու իրավասություն,
2. այդ տեղեկությունները պետական անվտանգության համար կարևոր պաշտոններում թեկնածուների ընտրության ժամանակ օգտագործելու իրավասություն»:

Եվրոպական դատարանի մեկ այլ վճռում արվում է հետևյալ ամրագրումը. «Եթե դատապարտումը նպատակ ունի պատժել գաղտնի «համարվող ռազմական ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը, ապա և նպատակ ունի պաշտպանել պետական անվտանգությունը», ինչն իրավաչափ նպատակ է 10-րդ հոդվածի 2-րդ կետի նպատակների համար: Հարկ է նշել, որ «պետական անվտանգություն» ձևակերպման պարզ մեկնաբանությունը ենթադրում է պետության ապահովությունն ընդդեմ թշնամիների, որոնք կարող են փորձել թուլացնել նրա ուժերը պատերազմում կամ տապալել կառավարությունը ապօրինի միջոցներով:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում (ի տարբերություն 8-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածների) «պետական անվտանգության» պաշտպանության նպատակի հետ միասին սահմանված է նաև «տարածքային ամբողջականության» պաշտպանության նպատակը: Խիստ կարևոր է ընդգծել, որ մի շարք դեպքերում «տարածքային ամբողջականության» պաշտպանության նպատակը կարող է հանդես գալ «պետական անվտանգության» պաշտպանության նպատակի ներքո: Սա է հենց այն պատճառը, որ, չնայած թվարկված 8-րդ, 9-րդ, 11-րդ հոդվածներում

«տարածքային ամբողջականության» պաշտպանության իրավաչափ նպատակի բացակայության, նույն այդ նպատակը կարող է վկայակոչվել իբրև (համապատասխանաբար) անձնական և ընտանեկան կյանքի, մտքի, խղճի և կրոնի, հավաքների և միավորման ազատության սահմանափակման հիմք:

Անդրադառնանք նաև անկարգությանը կամ հանցագործությունների կանխմանը: Եվրոպական դատարանը որոշակի կերպով տարանջատում է «կարգ» և «հասարակական կարգ» հասկացությունները: Ըստ դատարանի՝ «կարգ» հասկացությունը վերաբերում է և՛ հասարակական կարգին, և՛ այն կարգին, որը պետք է գերիշխի առանձին սոցիալական խմբի շրջանակներում:

Օրենքը նախատեսում է, որ «ազատ ժողովրդավարական սահմանադրական կարգը» սպառնացող «վերահաս վտանգներից» պաշտպանելու համար իրավասու մարմինները կարող են թույլատրել սահմանափակումներ», - ամրագրում է Եվրոպական դատարանն իր վճիռներում: Իր մեկ այլ գործով վճռում այդ նույն դատարանը մատնանշում է, որ դիմողի արտահայտվելու ազատությանը պետության միջամտության նպատակը պետական իշխանության պահպանումն է՝:

Եվրոպական դատարանը Սուբրոնիկ AG-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով նույնպես անդրադառնում է կարգին, որի պաշտպանության համար տեղի էր ունեցել միջամտություն արտահայտվելու ազատությանը (միջազգային ռադիոհաճախականություններով): Դատարանը նշում է. «Հաշվի առնելով առկա հաճախականությունների սահմանափակ քանակը՝ միջամտությունը կարևոր էր կանխելու համար այն, ինչը կարող էր առաջանալ տեղեկատվության սահմանափակ միջազգային շրջանառության արդյունքում»:

Ըստ էության, «անկարգության կանխում» հասկացությունը մոտ է «հանցագործությունների կանխում» հասկացությանը: «Հանցագործությունների կանխում»-ը, ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, վերաբերում է ոչ միայն ապագայում տեղի ունենալիք հնարավոր հանցագործություններին (դրա մեջ ներառված է արդեն կատարված հանցագործության կապակցությամբ ընթացող հետաքննության պաշտպանությունը): Դատարանն ամրագրում է, որ նպատակի հետապնդումը կարող է «արդարացնել միջամտության ավելի լայն ծավալի միջոցառումները, եթե դրանք կիրառվում են ազատագրկված անձի նկատմամբ, քան այն դեպքում, երբ դրանք կիրառվում են ազատության մեջ գտնվող անձի նկատմամբ»: Փաստորեն, նման մոտեցում կարելի է դրսևորել այն անձի նկատմամբ, որը գտնվում է կալանքի տակ, և որի կատարած գործողու-

www.journal.lawinstitute.am

թյունների կապակցությամբ ընթանում է հետաքննություն (այս դեպքում առկա է գաղտնի համաձայնության գալու վտանգը): Համաձայն դատարանի նախադեպային իրավունքի՝ գործողությունը, որը կանխելու նպատակով թույլատրվում է արտահայտվելու ազատությանը միջամտել, պետք է լինի քրեական բնույթի:

Այժմ՝ առողջության կամ բարոյականության պահպանման նպատակով սահմանափակման մասին: Նշենք, որ, համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, «բարոյականությունը» առաջին հերթին ներառում է «պարկեշտության վերաբերյալ պատկերացումները»: Այս իմաստով «բարոյականության պաշտպանությունը» նշանակում է բնակչության պաշտպանությունն այնպիսի վարքագծից, որը հասարակության համար կարող է լինել խոցելի:

Կարևոր է նշել, որ «բարոյականությունը» չի սահմանափակվում միայն «պարկեշտության» և «բարեկրթության» գաղափարներով. այն ներառում է նաև ճշմարտի և ոչ ճշմարտի վերաբերյալ տվյալ հասարակությունում առկա հիմնարար գաղափարներ:

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ արտահայտվելու ազատության սահմանափակումներին վերաբերող գործերը, որոնց առնչությամբ դատարանը Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում չի արձանագրել, հիմնականում վերաբերում են այն դեպքերին, երբ տվյալ սահմանափակումը կիրառվում է «բարոյականության պահպանման նկատառումներից ելնելով»:

Ըստ Եվրոպական դատարանի՝ «դատական իշխանությունը» ներառում է արդարադատության իրականացման կառուցակարգը (դատավորներին, որոնք գործում են իրենց պաշտոնական կարգավիճակում)¹⁰: Շատ են արձանագրված դեպքերը, երբ պետությունները դատական իշխանության հեղինակության պաշտպանության նպատակով սահմանափակում են արդարադատության իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու՝ մամուլի ազատությունը (նմանօրինակ սահմանափակումը դրսևորվում է կամ որևէ դատաքննության ընթացքի վերաբերյալ լրատվական միջոցների հրապարակումն արգելելու, կամ նման տեղեկատվություն հրապարակած լրագրողին պատասխանատվության ենթարկելու, կամ որևէ այլ միջոցով):

Վերոհիշյալի նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ Եվրոպական դատարանի ընդհանուր սկզբունքն այս է. «հասարակական կարևորագույն հարցերի վերաբերյալ կարծիքներ արտահայտելու ազատության հիմնարար սկզբունքը և այդ ազատության պաշտպանության բարձր

մակարդակը հավասարապես կիրառելի են նաև արդարադատության ոլորտի նկատմամբ, քանի որ արդարադատությունը ծառայում է ողջ հասարակության շահերին»:

Ըստ Դատարանի եզրահանգման՝ «Մամուլի ազատությանը վերաբերող սկզբունքները հավասարապես կիրառելի են արդարադատության իրականացման ոլորտի նկատմամբ, որը ծառայում է ընդհանուր առմամբ հասարակության շահերին և պահանջում է տեղեկացված հասարակության համագործակցություն. ՉԼՄ-ները չպետք է դուրս գան արդարադատության պատշաճ իրականացման շահերից՝ ելնելով սահմանված շրջանակներից¹¹: Արդարադատության հեղինակության պաշտպանության նկատառումներով արտահայտվելու ազատության սահմանափակման դրսևորում է հանդիսանում դատավորներին զրպարտելու կամ վիրավորելու համար լրագրողներին պատասխանատվության ենթարկելը:

Եվրոպական դատարանը, ճանաչելով դատավորներին, նրանց գործունեության քննադատության ազատությունը, անհրաժեշտ է համարում նրանց պաշտպանվածության ապահովումը ոչնչով չարդարացվող հարձակումներից՝ հատկապես նկատի ունենալով այն, որ դատավորների վրա դրված է զուսպ լինելու պարտականություն, ինչը խոչընդոտում է նրանց իրենց դեմ ուղղված քննադատությանը պատասխանելուն:

«Որպես իրավական պետությունում հիմնարար արժեքի արդարադատության երաշխավոր՝ դատական համակարգն իր պարտականությունները հաջողությամբ կատարելու համար պետք է օգտվի հասարակական վստահությունից: Ուստի, անհրաժեշտ է նման վստահությունը պաշտպանել անհիմն վնասակար հարձակումներից», - կարդում ենք Պրագերը ու Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի գործով վճռում:

Այսպիսով, որպեսզի արտահայտվելու ազատությանը ներպետական մարմինների միջամտությունը համարվի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», այն պետք է սկզբունքորեն արդարացված լինի և համաչափ այն նպատակին, հանուն որի կատարվել է, պետք է գոյություն ունենա համամասնության ողջամիտ հարաբերակցություն կատարված միջամտության և հետապնդվող նպատակների միջև: Բացի նշվածից, տվյալ միջամտության անհրաժեշտությունը, միջամտության և հետապնդվող նպատակի միջև համաչափության ու համամասնության գոյությունը պետք է հիմնավորվեն համոզիչ ու բավարար կերպով:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Վ.Հ. Հովհաննիսյան, Ջ.Գ. Գուկասյան, Լ.Օ. Հակոբյան Լ.Ս. Հակոբյան: Երևան, 2005: Նաև՝ Микеле де Сальвиа, Прецеденты Европейского Суда по правам человека. СПб., 2004:

² Տե՛ս Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Փաստաթղթերի ժողովածու: Գիրք Ա., Երևան, 2001, էջ 28:

³ Տե՛ս Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի գործով վճիռ, կետ 37:

⁴ Տե՛ս Օրգելվերը և Գարդիանը ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, կետ 59:

⁵ Տե՛ս «Սանդի Թայմսը» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, կետ 45:

⁶ Տե՛ս Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռ, կետ 52; Էյմանն Շվեյցարիայի գործով վճիռ, կետ 50; «Սանդի Թայմսը» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, կետ 49:

⁷ Տե՛ս Լեանդերն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը:

⁸ Տե՛ս Klass and others v. the Federal Republic of Germany, Judgment of 6 Sep. 1978:

⁹ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետ:

¹⁰ Տե՛ս «Սանդի Թայմսը» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, կետ 55:

¹¹ Նույն, կետ 65:

¹² Տե՛ս Ալան Յակոբսոնն ընդդեմ Շվեդիայի գործով 1989թ. հոկտեմբերի 25-ի վճիռը:

Лилиг Саргсян

соискатель Ереванского университета “Гладзор”

РЕЗЮМЕ

Основы правомерности ограничения прав и свобод человека по прецедентному праву Европейского суда по правам человека.

В настоящей статье исследуются правовые основы ограничения прав и свобод человека, согласно правоприменительной практике Европейского суда и прецедентному праву.

Ключевые слова: Европейский суд, права и свободы, основы правомочия, прецедентное право, государственная безопасность, гражданское общество, демократическое общество.

Lilit Sargsyan

competitor,

Yerevan “Gladzor” University

SUMMARY

Principals of human rights and freedoms restrictions in accordance with the case law of the European Court of Human Rights

This article examines the legal framework limiting human rights and freedoms, according to the legal practice of the European Court and the case-law.

Keywords: European Court, rights and freedoms, bases for competence, Case Law, state security, civil society, democratic society.